դութեան չենթարկուելով՝ կործանուել է. քսան աչքից՝ մի աչքն է մնացել, որի քայքայուած առաստաղի տակ հանգչելը կամ դիշերելը ծայրահեղ վտանգաւոր է: Միջնաբերդը, պարիսպները, դղեակները Թորթումի մէջ այնպէս են կործանուած, որ այցելուն հառաչում է այդ աւերակներին մօտենալիս, թէ չատ չնչին բան է տեսնելու: Բայց այնպիսի վեհութիւն ունի, որ այցելուն կարծում է թէ՝ առաջի մի ոստան է, մի իշխանական ապարանք, սակայն չքաւոր բնիկները անվերջ պեղել ու խախլել են հողերը աջ ու ձախ, որեւէ հին դրամ, կնիք, մատանի, զարդ, ճրագ, աշտանակ, կասկարայ, արձան-անդրի դտնելու յուսով. որոնք անմիջապէս Եւրոպացիներին ծախել ու փող են ստացել: Քանդել ու փչրել են դոլմէնները, կուրգաններն եւ գերեզմանները, իրենց նախորդների հանգստարանները եւ նպաստել են ժամանակին աւելի արագ կատարելու իր աւերածները: Սրբատաշ քարերով, կրով շաղախուած պատերն այնքան ամուր եւ կիրը քարացած է, որ չատ տեղ որմերը պահպանել են իրենց նախնական դիրքը:

Մի քիչ շեղուենք մեր նիւթից: Կրի գործածութիւնը մեր երկրում հաստատապէս կատարուել է Ուրարտացիների ժամանակ: Վանի միջնաբերդի պարիսպները կենդանի ապացոյց են այդ փաստի: Պէտք է ենթադրել, որ այդ կիրը գործա-